«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդ Դաղիկյան

Ուսումնական հաստատություն՝ Գեղարքունիքի մարզ,Լճափ գյուղի միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն----------3

2. Գրաչանաճության նախաայբբենական շրջանի կրթադաստիարակչական նպատակները----------4

3. Գրաչանաճության նախաայբբենական շրջանի կրթադաստիարակչական նպատակները----------4

3. Եզրակացություն ----------20

4. Գրականության ցանկ ----------21

Ներածություն

Նախաայբբենական փուլից սկսած արդեն ուսուցիչը նպատակ է դնում իր առջև՝ երեխային սովորել սովորեցնելը, և այդ պետք է դառնա հանրակրթական դպրոցի նախնական օղակի ուսումնական գործընթացի կարևորագույն խնդիրը:

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս,անկախ հայեցակարգային դիրքորոշումներից,գրեթե առանձնացնում ենք հատուկ նախապատրաստական շրջան,որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի կազմակերպման ուղիները:

Նախաայբբենական փուլում տարվող աշխատանքների հաջող կազմակերպ-ման համար շատ կարևոր է դպրոց ընդունվող երեխայի նախապատրաստումը դպրոցական կյանքին ու կանոններին:

Դպրոցը երեխայի համար նոր աշխարհ է՝ նոր հետաքրքրություններով, հոգսերով ու տպավորություններով ուրախություններով ու դժվարություններով: Ոսուցիչն իր աշխատանքն այնպես պետք է կազմակերպի, որ առաջին օրերին երեխաների համար այդ ամենի մեջ հաճելին ավելի շատ լինի, ոգևորությունն ավելի շատ լինի, քան հուսախաբությունը: Սա շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն այս առաջին օրերի ուսուցողական դժվարին խնդիրների լուծման համար, այլև դաստիարակչական տեսակետից: Սովորելու աշխատանքի պատասխանատվությունը և դժվարությունը երեխաներն անպայման պետք է զգան, սակայն դրա հետ մեկտեղ պետք է զգան, որ այդ աշխատանքն իրենց ուժերին ու կարողություններին հասանելի է, որ ուսուցիչը դժվարին պահերին միշտ իրենց հետ է և չկա որևէ դժվարություն, որ նրանք աշխատելու դեպքում միասին չհաղթահարեն

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՐԹԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նախայբբենական շրջանի կազմակերպման նպատակները

Գրաճանաչության ցանկացած մեթոդով աշխատելիս, անկախ հայե-ցակարգային դիրքորոշումներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական շրջան, որի ժամանակ լուծվում են ուսուցման այդ փուլի մանկավարժահոգեբանական ուսումնասիրությունների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, նախադպրոցական տարիքի երեխաների առանձնահատկություններով, կրթօջախի տեսակով և կրթության՝ այդ օղակի նպատակներով պայմանավորված որոշակի խնդիրներ:

Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով.

ա.Նախայբբենական շրջան,

բ. Այբբենական շրջան,

գ. Հետայբբենական շրջան

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՐԹԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գրաճանաչության նախայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի կազմակերպչական և ուսումնական:

Կազմակերպչական խնդիրներն են.

1. Երեխաների ծանոթացում նրանց համար նոր ուսումնական գործունեությանը.

- Ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,

- Աշակերտների ծանոթացումը միմյանց հետ, մանկական կոլեկտիվի ստեղծում
- Ծանոթություն կրթական տվյալ հաստատության կարգ ու կանոնին, դպրոցական շենքին
- Ծանոթություն երեխաների իրավունքներին և պարտականություններին,
- Աշակերտական նստարանին ճիշտ նստելու, խոսելու ցանկության դեպքում ձեռք բարձրացնելու և ձայն խնդրելու, խոսելիս նամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնելու ունակությունների մշակում,

- Ուսուցչին, ընկերներին և իրեն դիմած յուրաքանչյուրին բարձրաձայն, հստակ և ամբողջական խոսքով պատասխանելու կարողության ձևավորում, ուսուցչի խոսքը լսելու հասկանալու նրա տված հանձնարարությունները կատարելու ունակության զարգացում,

- Ընկերներին, ուսուցիչներին և միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքին բարեկիրթ արձագանքելու ունկության ձևավորում,

- Գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնների յուրացում:

2. Հարմարեցում ուսումնական գործունեությանը (ադապտացիա):

Ուսումնական խնդիրները

1. Ուսումնական գործունեությունը երեխաների պատրաստականության մակարդակի բացահայտում:

Այս խնդրի ուսումնասիրությունն ուսուցիչն իրականացնում է մինչև ուսումնական տարվա սկսելը: Ուսուցիչը պիտի ուսումնասիրի դասարանի աշակերտների

անձնական գործերը, զրուցի ծնողների հետ, հանգամանորեն հետաքրքրվի նրանց առողջական տվյալներով, ակնառու, ընդգծված առանձնահատկություններով:

Երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար: Ծանոթությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի շուրջ իրականացվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների կատարման ճանապարհով: Արդյունքներն ամփոփելու համար ուսուցիչը պիտի պարզի յուրաքանչյուր աշակերտի

ա) խոսելու, բացատրվելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցիչներին լսելու, հասկանալու, ուսուցչի հանձնարարությունները կատարելու, ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը,

բ) հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը.

- Բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ,
- Հնչյուններին արտասանում է որոշակի սխալներով (ունի լեզվական արատ),
- Ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն խոսք,
- Ունի արտահայտիչ խոսք.

գ) բանավոր կապակցված խոսք.

- Ունի իր տարիքին համապատասխան բառապաշար,
- Անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ,
- Գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները (ինքնուրույն կամ հարցերի օգնությամբ),

- Ուսուցչի հարցերի օգնությամբ կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ-երկու՝ մտքով իրար կապված նապադասություն,
- Ուսուցչի, տարեկիցների և ավագների հարցերին պատասխանում է ընդարձակ (համառոտ) և ավարտուն նախադասություններով,
- Ուսուցչի կամ օտար մարդկանց ներկայությամբ կաշկանդված է, չի խոսում,

դ) խոսքի շարահյուսական կառույցը.

- Կազմված է հստակ կառուցվածք ունեցող շարահյուսորեն ավարտուն, պարզ նախադասություններով,
- Կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով,
- Կապակցված խոսքում օգտագործած նախադասությունների միջև բացակայում են տրամաբանական, պատճառահետևանքային կապերը, չունի ամբողջական նախադասություններ կառուցելու կարողություն,
- Նախադասությունները թողնում է անավարտ և անցնում է նոր մտքի,
- Նախադասությունները թողնում է անավարտ

Այս և ուսուցչի կողմից արժևորվող այլ տվյալները նրան պետք են ոչ թե ըստ երեխաների գիտելիքների և կարողությունների մակարդակի դասարանները ձևավորելու, այլ դրանք ուսումանակն գործընթացում հաշվի առնելու և ըստ նրանց իր ծրագիրն ու պարապունքները կառուցելու, իր ուսումնական ռազմավարությունը որոշելու, աշակերտների հետ տարվող ֆրոնտալ, փոքր խմբերով և անհատական աշխատանքները պլանավորելու և նախատեսածին համապատասխան իրականացնելու, ծնողներ հետ անհրաժեշտ աշխատանք տանելու համար։

2. **Նախաայբբենական շրջանի վերջուում աշակերտների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմռուությունների սահմանները**

Գրաճանաչության այբբենական շրջանն արդյունավետ իրականացնելու համար երեխաները նախաայբբենական շրջանի վերջում պետք է

- Գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի (ձայնավոր, բաղաձայն) մասին և այդ եզրույթներն օգտագործեն խոսքում,
- Պարզագույն սիմվոլիկ զննականության միջոցով (գծապատկեր) կարողանան ներկայաացնել նախադասությունը, բառը, վանկը, տառը,
- Ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և գունային սիմվոլի միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում,
- Գիտակցեն ձայնավոր դերը վանկակազմավորման գործում,
- Ունենան որոշակի բառապաշար և մտքերը կապակցված խոսքով ներկայացնելու (2-3 նախադասությամբ) կարողություն,
- Ձեռքերը նախապատրաստված լինեն գրելուն,
- Ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ,
- Կարողանան գրել հայերենի տառերի պարզ մասնիկները՝ ըստ նրանց չորս տեղադրության

Ունկնդրում և խոսք.

- Կարողանան ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները, պատմվածքները, բանաստեղծություններն ունկնդրել և հարցերի օգնությամբ վերարտադրել,
- Անգիր իմանան և արտահայտիչ ատասանեն սովորած բանաստեղծություններն, հանելուկները, շուտասելուկները,

- Կարողանան մանկական թեմատիկայով առանձին նկարների շուրջ մտքով իրար հետ կապված 2 3 նախադասություն կազմել, որոշել նախադասության կազմի մեջ մտնող բառերի քանակը (ուսուցչի հարցերի օգնությամբ),
- Կարողանան պատմել ըստ տեսածի, ըստ ունկնդրածի, ըստ հիշողության, ըստ նկարի,
- Կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների (խաղալիքներ, սպասք, ծաղիկներ և այլն) և ըստ նրանց հատկանիշների (փայտից է, քաղցր է, հոտավետ է և այլն):

Ուսուցիչը տնական վարժությունների միջոցով պետք է զարգացնի երեխաների հնչյունային լսողությունը, առանց որի հնարավոր չէ գրաճանաչության ուսուցումը: Նախաայբբենական փուլի խնդիրներից է նաև երեխաների գրաֆիկական տեսողության զարգացումը, որպեսզի նրանք կարողանան տարբերել կողմերը՝ վերև, ներքև, աջ, ձախ, առարկաների ձևերը՝ կլոր, ձվաձև, քառակուսի, եռանկյունի, գծերը՝ ուղղահայաց, հորիզոնական, ուղիղ, թեք, կլոր, կետերը, տողերն ու տառամասնիկները: Նախաայբբենական փուլում գրաֆիկական տեսողության զարգացման համար կարևոր նշանակություն ունեն հատուկ դիդակտիկ պարագաների՝ երկրաչափական ձևերի, պարզ պատկերների, գունավոր պաստառների օգտագործումը, պարզ պատկերների գունավորման, մանրագծման ու նրբագծման աշխատանքները: Նախաայբբենական փուլի կարևոր խնդիրներից է գրամոտորային կինեսթեզիաների մշակումը՝ հատկապես ձեռքի դաստակի ու մատների մանր մկանային համակարգերի զարգացումը, նուրբ ու չափավորված շարժումների ու դրանց համակցման կարողության մշակումը: «Այբբենարանի» նախաայբբենական փուլի հիմնական նպատակը գրաճանաչության համար անհրաժեշտ հիմք ստեղծելն է: Այն նյութ է տալիս բազմապիսի լեզվական, ճանաչողական ու դաստիարակչական աշխատանքների համար:

Նախաայբբենական փուլում տարվող աշխատանքները ուղղված են մեկ հիմնական նպատակի՝ երեխաներին գրաճանաչության նախապատրաստելուն: Այս փուլում տարվող աշխատանքների համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում ուսումնական հարցերը: Գրաճանաչության ուսուցման համար աշակերտները պետք է որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ ունենան, տեսականորեն ու գործնականորեն նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ: Լեզվական նախագիտելիքների ուսուցումը, որպես գրաճանաչության ուսուցման համար լեզվական նախադրյալների ստեղծման պայման, անհրաժեշտություն է և դրա վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել: Նախադասության, բառի, վանկի, միավանկ ու բազմավանկ բառերի, հնչյունի, ձայնավոր և բաղաձայն հնչյունների, տառի, մեծատառի ու փոքրատառի և այլ լեզվական հասկացությունների մասին երեխաները գաղափար պետք է կազմեն նախաայբբենական շրջանում: Այբբենարանում տրված թեմատիկ, առարկայական և բառնկարների օգնությամբ երեխաներին գաղափար ենք տալիս խոսքի, նախադասության ու բառերի մասին, այդ լեզվական անվանումները կապելով կոնկրետ հասկացությունների յուրացման հետ, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը որոշակի բովանդակություն ու իմաստ ստանա և հեշտությամբ մտապահվի: Առանձնապես օգտակար են նախադասությունները բառերի բաժանելու, առաջադրված բառերով նախադասություններ կազմելու, ինքնուրույն կերպով նախադասություններ ու բառեր ասելու վարժությունները: Նախաայբբենական շրջանում բառի մասին հասկացություն տալուց հետո գաղափար պետք է տալ նաև վանկի՝բառի արտասանական միավորների կամ մասերի վերաբերյալ: Այս կապակցությամբ էլ երեխաները կծանոթանան միավանկ բառ և բազմավանկ բառ հասկացություններին: Վանկի մասին տրվելիք հասկացությունը մատչելի դարձնելու համար Ա. Բահաթրյանն օգտագործել է վանկային կորերը, որոնք այսօր

հաջողությամբ գործադրվում են: Դրան զուգընթաց օգտագործվում են նաև

նախադասության, բառի ու վանկի գծային մոդելները, որոնք նախաայբբենական փուլում օգնում են այդ հասկացությունների յուրացմանը, երբ բառի գրաֆիկական ձևը դեռևս չկա և կորերը պետք է օգտագործվեն մոդելների հետ, և մոդելն է բառի վանկային կառուցվածքի և նախադասության բառային կազմի հիմնական նյութականացնողը: Վանկից անցում է կատարվում հնչյունին, որպեսզի հետագայում բոլոր վերլուծությունները մինչև լեզվական տարրական մասնիկների տարբերակումը հասցնելու հնարավորություն ստեղծվի, և հող նախապատրաստվի գրաճանաչության ուսուցման համար: Սկզբում գաղափար է տրվում վանկի, ապա նաև բառի մեջ եղած հնչյունների մասին, իսկ ավելի ուշ երեխաներին պետք է սովորեցնել տարբերակել հնչյուններն ըստ արտասանության երկարության կամ ժամանակի, ըստ ձայնի և աղմուկի հարաբերության: Ըստ որում, երեխաները պետք է կարողանան տարբերել երկար արտասանվող և շատ ձայն ունեցող ձայնավոր և կարճ արտասանվող ու քիչ ձայն ունեցող բաղաձայն հնչյունները, դրանք արտահայտել գծային մոդելների վրա՝ սկզբում միայն հնչյունների քանակը, իսկ ապա նաև տեսակը նշելով: Ամբողջ վերլուծության շղթան նախադասությունից մինչև հնչյուն տանող հաջորդականությամբ այսպիսի պատկեր կունենա գծային մոդելով արտահայտելիս. Նախաայբբենական փուլում գրելու ուսուցմանը երեխաներին նախապատրաստելը ևս կարևոր նշանակություն ունի գրաճանաչության ուսուցման համար: Գրաճանաչություն ասելով հասկանում ենք ոչ միայն հնչյունների գիտակցումն ու դրանց համապատասխան տառերի ճանաչումը, այլև սովորած տառերը գրելը, այսինքն՝լսած հնչյունն իր համապատասխան տառով նշանագրելը, տառերը համադրելով բառեր ու նախադասություններ ստանալը: Գրելու աշխատանքին վարժեցնելու համար ամենից առաջ պետք է զարգացնել աջ ձեռքի դաստակի ու մատների մանր

մկանային համակարգը: Երեխայի ձեռքը գրելուն նախապատրաստելու համար մի շարք աշխատանքներ պետք է կատարել, որոնցից են մկանահոդային վարժությունները,որոնք կարելի է անցկացնել թե՛ դասից դուրս՝ ֆիզկուլտուրայի պարապմունքների ու ֆիզկուլտ դադարների ընթացքում, թե դասի ընթացքում գրելու աշխատանքից առաջ, գրելու ընթացքում անցկացվող կարճատև դադարների ընթացքում: Բացառիկ կարևոր նշանակություն ունեն պատկերների գունավորման վարժությունները, որոնք հնարավորություն են տալիս գրիչը բռնել սովորեցնել, մատիտով աշխատել, գունավորման սահմաններն ու չափերը պահել,գույները տարբերել, երեխաների մեջ գունազգացողություն զարգացնել: Նախաայբբենական փուլի համար նախատեսված գրատետրերը հենց դրա համար են նախատեսված: Կարևոր է նաև պարզ պատկերների մանրագծումն ու նրբագծումը, որը զարգացնում է աչքաչափը, սահմանի ու հեռավորության, համաչափության ու նմանության, ուղղության ու զուգահեռության զգացողությունը: Տարբեր ուղղությամբ տարվող նրբագծերն ու մանրագծերը հնարավորություն են տալիս տիրապետելու ձեռքի շարժումներին, դրանք դարձնելու նուրբ ու չափավորված: Նույնքան արժեքավոր է նաև պարզ պատկերների նկարումը, որն ավելի բարդ աշխատանք է և պահանջում է ավելի մեծ լարվածություն, պատկերելու կարողություն և գրչին տիրապետելու վարժվածություն: Շրջապատի պարզ առարկաների գծագրումը երեխաներին մեծ հաճույք է պատճառում և շատ օգտակար աշխատանք է: Այս բոլորը նախապատրաստում են գրելու ուսուցումը, որի համարանցման աստիճան են հանդիսանում գրելու նախավարժությունները, որոնք քառակուսի, եռանկյունի, կիսաշրջանաձև և ոլորվող պատկերներ են կամ պատկերների շարքեր՝ նման եզրանախշերի: Սրանց գրելը դեռևս նկարելու կամ գծագրելու տարրեր ունի և հող է ստեղծում տառամասնիկների գրությանն անցնելու համար: Տառամասնիկները մեր տառերի

գրության չորս տեղադրություններին համապատասխանող, չորս տարբեր չափերի, 7-8 տեսակի, տարբեր մասնիկներ են, որոնք մասնակցում են մեր բոլոր տառերի ձևավորմանը: Այս աշխատանքի կատարումն արդեն մոտենում է գրելու գործողությանը թե վարժությունների բնույթով և թե նյութական տեսակետից հող է նախապատրաստում դրա համար: Տառամասնիկներին անդրադառնում ենք նաև հետագայում, այբբենական շրջանում, սակայն այն ժամանակ վերցնում ենք միայն անցնելիք տառի ձևավորմանը մասնակցող մասնիկները և ցույց տալիս տառի ձևավորումը, իսկ նախաայբբենական փուլում այդ հարցին մոտենում ենք ընդհանրապես: Կարդալու նախապատրաստումը ևս կարևոր աշխատանքներից է: Կարդալու մտավոր գործողությանը երեխաներին պետք է վարժեցնել դեռևս նախաայբբենական շրրջանում՝ հիմք ունենալով բառերի գծային մոդելներն ու վանկային կորերը: Այդ աշխատանքը կարելի է տանել հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող միավանկ ու տարբեր վանկային կառուցվածք ունեցող բառերի գծային մոդելների վրա վերլուծական ու համադրական աշխատանք կատարելով, որը նախաայբբենական շրջանում տարվող լեզվական աշխատանքի հիմնական բովանդակությունը պետք է կազմի: Հնչույթավանկային մեթոդով պարապելիս հիմնականում վերցվում են երկվանկ բառեր, և ուշադրություն է դարձվում վանկերով կարդալու ալգորիթմի մշակմանը, իսկ հնչույթաբառային մեթոդով պարապելիս ավելի շատ վերցվում են միավանկ և ապա նոր երկվանկ բառեր, և ուշադրրություն է դարձվում ամբողջական բառերով կարդալու ալգորիթմի ձևավորման վրա: Այս դեպքում, եթե ընթերցվող բառը բազմավանկ է, և երեխաներն այն կարդում են վանկերով, ապա անպայման վերջնական աստիճանը պետք է համարվի վանկերի ամբողջացումը բառի մեջ և բառի ամբողջական ընթերցումը: Առաջադրված բառերի գծապատկերները կազմելը կամ պատրաստի մոդելներին համապատասխանող բառեր գտնելը, դրանց հնչյունային ու վանկային

կառուցվածքը գիտակցելը, այդ բառերն ըստ առաջադրված մոդելի կարդալը

երեխաների մեջ մշակում է բառերի վանկային սահմանագիծն զգալու և ըստ այդմ բառը վանկերով կամ ամբողջական ձևով կարդալու կարողություն: Այս կարողությունը հետագայում մշակվում ու կատարելագործվում է տառային հիմքով կատարվող վարժությունների ընթացքում, սակայն կարդալու սկզբնական կարողության ձևավորման հիմքը դրվում է նախաայբբենական փուլում: Այժմ գործածության մեջ գտնվող երկու այբբենարաններում էլ նախաայբբենական փուլում դասերի մեծ մասը տրված է թեմատիկ նկարով և մի քանի առարկայական նկարներով, որոնք կապված են թեմատիկ նկարի հետ, նրա բաղադրիչն են կազմում և լրացնում ու ամբողջացնում են էջում ներկայացված պատմությունը: Երբեմն էլ թեմատիկ նկարի հետ տրվում են նաև նկարպատմության հերոսները կամ առարկաներ այդ թեմաների նկարներից՝ գործողության մեջ: Ամբողջի այսպիսի բաժանումը կամ մասնատումը նպաստում է ամբողջը ավելի լավ, ճիշտ հասկանալուն, հնարավորություն է ստեղծում լեզվական ու տրամաբանական աշխատանքն ավելի մատչելի դարձնելու, որովհետև բաղադրիչների օգնությամբ հեշտանում է ամբողջի ընկալումը: Թեմատիկ նկարը կամ նկար պատմությունը, պատմությունից այն բաղադրող նկար-նախադասությունների բաժանումը, այնուհետև դրանցից նկար-բառերի անջատումը մեծապես նպաստում է երեխաների մեջ վերլուծական կարողությունների մշակմանը, ինչպես նաև մասերի և ամբողջի փոխհարաբերությունների ճիշտ ըմբռնմանը: Իսկ դրանց համեմատումն ու հակադրումը հնարավորություն կտան մասից գնալու դեպի ամբողջը և երեխաներին կսովորեցնեն պարզ համադրում կատարել. Այս կարողության մշակումը էական նշանակություն ունի նաև կարդալու և գրելու ուսուցման համար: Անշուշտ, նախաայբբենական շրջանի յուրաքանչյուր էջ ունի իր յուրահատուկ կառուցվածքը, բովանդակությունը, իր նպատակներն ու խնդիրները և դրանցով

պայմանավորված աշխատանքի ձևերն ու մեթոդական հնարները: Սակայն այդ

տարաբնույթ էջերի միջև կան աշխատանքի մեթոդների ու ձևերի ընդհանրություններ, որոնք ուսուցիչը պետք է լավ իմանա՝ էջերի ուսուցողական հնարավորությունն առավելագույնս օգտագործելու համար։

1. Յուրաքանչյուր էջի ուսումնասիրությունը պետք է սկսել դիտումով, որը կարելի է իրականացնել դասագրքի վրա կամ, եթե հնարավոր է, դասագրքի էջի մեծադիր պաստառի վրա: Մի քանի րոպե տևող դիտումից հետո երեխաները վերարտադրում են նկարի բովանդակությունը, դրա շուրջ դատողություններ անում:

2. Նկարի բովանդակության վերարտադրումից հետո պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրել ճանաչողական արժեք ունեցող հարցերի վրա. յուրաքանչյուր էջ անպայմանորեն նոր գիտելիքներ ու տեղեկություններ է պարունակում շրջապատող աշխարհի վերաբերյալ:

3.Նկարի վրա տարվող աշխատանքի երրորդ փուլը վերաբերում է լեզվական նյութի ուսումնասիրությանը, նրա ճանաչմանն ու ըմբռնմանը: Լեզվական երևույթի դիտումը, ճանաչումն ու բնութագրումը կատարվում են ուսուցչի անմիջական հսկողությամբ, ուղեկցվող լեզվական առաջադրանքներով և հուշող հարցադրումներով: Լեզվական աշխատանքը պետք է ուղեկցվի վերլուծություններով ու համադրություններով, բանավոր կամ գծապատկերներով արտահայտվող վարժություններով, ինչը շատ կարևոր է լեզվական վերացական հասկացությունները զննական դարձնելու և սովորածը մտապահելու համար: Թեմատիկ նկարների հետ տրվող առարկայական նկարները և դրանց լրիվ ու անավարտ գծապատկերները առատ նյութ են տալիս ամեն կարգի վերլուծական ու համադրական աշխատանքի համար, որոնք կարելի է իրականացնել ամենատարբեր բնույթի դիդակտիկ խաղերի ձևով:

4. Էջի վրա աշխատանքն ավարտվում է գրելու ուսուցման վարժություններով, որոնց օրինակները տրված են աշխատանքային տետրում, որտեղ առաջադրվում են գունավորելու, մանրագծելու և նրբագծելու բազմաբնույթ աշխատանքներ: Դրանց օգնությամբ վարժեցվում է ձեռքի մանր մկանային համակարգը, և երեխայի մեջ մշակվում է գրելու ալգորիթմը այս ընթացքում երեխաները սովորում են այն տառամասնիկները, որոնք ընկած են բոլոր, հատկապես 1-ին փուլում անցնելիք տառերի հիմքում: Յուրաքանչյուր առաջադրանքից առաջ ուսուցիչը նախ՝ բացատրում է, թե աշակերտներն ինչ պետք է կատարեն և ինչ հաջորդականությամբ, ապա՝ բանավոր բացատրություն պահանջում երեխաներից՝ համոզված լինելու համար, որ նրանք պատկերացնում են իրենց անելիքը: Իսկ բուն աշխատանքի ժամանակ ուսուցիչը հսկում և հետևում է, որ աշակերտները ճիշտ նստեն, տետրը ճիշտ դնեն սեղանին, գրիչը ճիշտ բռնեն:

Նախաայբբենական փուլում կարևոր է նաև տեսողության և լսողության զարգացումը, որը երեխաների ճանաչողության և մտածողության զարգացման նախապայմանն է: Ուսուցիչը տնական վարժությունների միջոցով պետք է զարգացնի երեխաների հնչյունային լսողությունը, առանց որի հնարավոր չէ գրաճանաչության ուսուցումը:

Նախաայբբենական փուլի խնդիրներից են նաև երեխաների գրաֆիկական տեսողության զարգացումը: Նրանք կարողանան տարբերել կողմերը՝ վերև, ներքև, աջ, ձախ, առարկաների ձևերը՝ կլոր, ձվաձև, քառակուսի, եռանկյունի, գծերը՝ ուղղահայաց, հորիզոնական, ուղիղ, թեք, կլոր, կետերը, տողերն ու տառամասնիկները:

Նախաայբբենական փուլում գրաֆիկական տեսողության զարգացման համար կարևոր նշանակություն ունեն հատուկ դիդակտիկ պարագաների՝

երկրաչափական ձևերի, պարզ պատկերների, գունավոր պաստառների օգտագործումը: Պարզ պատկերների գունավորման, մանրագծման ու նախագծման աշխատանքները:

Նախաայբբենական փուլի կարևոր խնդիրներից է նաև գրամոտորային կինեսթեզիաների մշակումը:

«Այբբենարանի» նախաայբբենական փուլի հիմանական նպատակը գրաճանաչության համար անհրաժեշտ հիմք ստեղծելն է: Այն նյութ է տալիս բազմապիսի լեզվական, ճանաչողական ու դաստիարակչական աշխատանքների համար:

Նախաայբբենական փուլում տարվող աշխատանքները ուղղված են մեկ հիմնական նպատակի՝ երեխաներին գրաճանաչության նախապատրաստելուն:

Այս փուլում տարվող աշխատանքերի համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում ուսումնական հարցերը: Գրաճանաչության ուսուցման համար աշակերտները պետք է որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ ունենան, տեսականորեն ու գործնականորեն նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ:

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները բաժանվում են 2 խմբի՝ կազմակերպչական և ուսումնական։

Կազմակերպչական խնդիրներ. նոր ուսումնական գործունեության ծանոթացումը,

ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ, ծանոթություն կրթական հաստատության կարգուկանոնին, դպրոցական շենքին ծանոթություն երեխաների իրավունքներին ու պարտականություններին ընկերներին, ուսուցիչներին և

միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքին բարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորումը գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքով վերաբերվելու կանոնների յուրացումը:

Ուսումնական խնդիրներ. երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրում

խոսելու, բացատրելու, հարցեր տալու, լսելու հասկանալու, հանձնարարությունները կատարելու, համագործակցելու և հաղորդակցվելու ունակությունների մակարդակը հնչյունային լսողության մակարդակը և հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունները. բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ, հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով, ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն բանավոր կապակցված խոսք կառուցելու կարողություն ունի իր տարիքին համապատասխան բառապաշար, անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ, կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները, կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ-երկու մտքով իրար կապակցված նախադասություններ, կարողանում է առաջադրված հարցերին պատասխանել ավարտուն նախադասություններով, խոսքի շարահյուսական կառույցը. կարողանում է կառուցել ավարտուն, պարզ նախադասություններով խոսք, խոսքը կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով, կապակցված խոսքում օգտագործված նախադասությունների միջև բացակայում են տրամաբանական,պատճառահետևանքային կապերը, չունի ամբողջական

նախադասություններ կառուցելու կարողություն, նախադասությունները թողնում է անավարտ և անցնում է նոր մտքի, գաղափար ունենան պատմության,

նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին, կարողանան դրանք օգտագործել խոսքում, ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և կարողանան գունային սիմվոլի միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում, գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմության մեջ ունենան որոշակի բառապաշար և մտքերը կապակցված խոսքով ներկայացնելու կարողություն ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ, կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների / խաղալիքներ, սպասք, ծաղիկներ, մրգեր, բանջարեղեն/ և ըստ նրանց հատկանիշների / փայտից է, քաղցր է, հոտավետ է/:

Նախադասության, բառի, վանկի, միավանկ ու բազմավանկ բառերի, հնչյունի, ձայնավոր ու բաղաձայն հնչյունների, տառի, մեծատառի ու փոքրատառի և այլ լեզվական հասկացությունների մասին երեխաները գաղափար պետք է կազմեն նախաայբբենական շրջանում:

Եզրակացություն

Նախաայբբենական շրջանի կազմակերպման խնդիրներն ու նպատակները թեմայի շուրջ կատարած հետազոտական աշխատանքների և վերլուծությունների արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացությանը՝

.Նախաայբբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է,աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ կատարելուն նախապատրաստելը և, միաժամանակ, նրանց մտածողության զարգացումն է, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

. ինչպես նյութից պարզ դարձավ՝ նախաայբբենական շրջանի գործունեության արդյունավետությունը , աշակերտների վերաբերմունքը ուսման նկատմամբ և նրանց հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են դպրոցական առաջին օրերի մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպմամբ, այն առանձնահատկությունների հաշվառմամբ, որոնք հատուկ են 6 տարեկան երեխաներին:

. Երեխան ավելի շատ է ուզում իմանալ և մասնակցել սովորելու գործընթացին այն ժամանակ, երբ լավ հասկանում է նյութը, հետաքրքրությունները բազմազան են:

. Երեխան պետք է խոսի, արտահայտի իր մտքերն ազատ ու համարձակ :Միայն այդ դեպքում նա ուսումնական գործունեության մեջ առաջընթաց կապրի: Այդ

նպատակով անհրաժեշտ է ստեղծել ազատություն, անկաշկանդություն, վստահություն, սիրո և գուրգուրանքի մթնոլորտ:

Օգտագործված գրականություն

1. Ջ. Գյուլամիրյան «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Զանգակ 2006թ.:

2. Ա. Պետրոսյան «Մեթոդական ձեռնարկ»:

3. Ա. Տեր – Գրիգորյան « Վեց տարեկան երեխաները դպրոցում», «Երևան – լույս» 1986թ.:

4. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր – Գրիգորյան « Վեց տարեկան երեխաների ուսուցման առանձնահատկությունները»,